և գինն նորա որպէս 'ի վեր յիշատակեալ զոր ինչ հատուցի այսօր խմանէ զուտ մնացորդ եօթն հարիւր դահեկան երծաթի հայոց հատուցանեմ առ Միքայէլ հովուին կամ իւր տեղակալին առանց պատճառ, և մեք Սողոմոն և Հայրապետս կրկին ուխտագիր եղաք, որ ո՛վ ոք 'ի մէնջ պակասեսցի 'ի վեր ուխտագրութենէ պարտաւոր լինիցի հատուցանել տոկոս զամենայն արժանաւորութեան վերոյ բանին ամենայն հարիւրի քսանումն և յետս դարձցի դահեկան այժմոյս ստացեալն, այսպէս հաստատեցաք դաշինս ուխտի մերոյ երկու միմեանց համեմատ, մին ես Սողոմոնս ձեռնադրեցի վասն Հայրապետին և մին ես Հայրապետս ձեռնադրեցի վասն Սողոմոնի 'ի դրունս զանձակու այսմ աւուր ապրիլի ամսի տասն յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Սողոմոն որդի Մինասայ. } ○

Հայրապետ որդոյ Միքայէլի. } ○

Մանկասար որդոյ Սիմէօնի։ } ○

Բաղդասար որդոյ Գաբրիէլի. } ○